(կարմրագեղով և նօտրագիր)[1]

40. Ցաղզս բուց եւ համարաց կ՚թկոսացն Ցաղթամարու Աթոռին ըստ նախնե՛ցն.

Ի[2] *թուականութե՛ հայոց գ՚ճ՚հ՚ին եղև շի-*
5 *նումն*[3] *մեծապայծառ Ս՚ը խաչ տաճարին ի նոյն աւուրսն և նոյն ժամանակին եղև նաւակատիկ և ցնծուի՛*[4] *յոյժ։ Եկն Տ՚ը գէւորք կ՚թկոսն առ Գագիկ արքայն և հաստատեցին զՍ՚ը*[5] *խաչս յաղթամարայ*

---

[1] *Ձ.ում 39ք կրում է հետևեալ մեզ ժամանակակից գրութիւնը մանիշակագոյն թանաքով. «Պատումութիւն և համար կաթուղիկոսաց Ս. Աթոռոյս. մատեան. Ն. Վեհափառութիւն Տ. Խաչատուր Ս. Կաթուղիկոս ետ գտեղել ի թանգարանի Ս. Աթոռոյս, զոր ինքն ետ կառուցանել և ճոխացոյց բազմազան մատենիւք զորս ինքն ընծայեաց, և զորս ի խորշից սենեկաց և ի գաւառաց ետ հաւաքել, յորս անխնամ կային յապականութե՛։ 1889 յունվար 2.»*

Սոյն գրուածքի ճակատին կայ մի երկլեզուեան բոլորաձև մի կնիք, եղերքը հայերէն մէջտեղը թուրքերէն, հետևեալ վերտառութեամբ. Կաթողիկոսարան Հայոց *մեծի տանն Աղթամարայ.* قتوغيكوسخانهٔ ملت ارمنيان در آختمار *(կաթողիկոսխանէի միլլէթի էրմէնեան դէր Աղթամար=կաթողիկոսարան ազգին Հայոց յԱղթամար)։ Թուրքերէնի տակ կայ մահմեդական թուական՝* ١٢٩٣ *(1293)։*

Էջի ստորոտում կայ մի երկրորդ կնիք, դիրքով աւելի փոքր և քառակուսի և ձևով նման Ամենայն Հայոց Հայրապետի փոքրագիր, անկիւնաւոր կնիքին որով դրոշմուած են լինում միշտ կոնդակները կարմրագեղով։ Կնիքի պարունակութիւնն է. Խաչատուր Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Հայոց տանն Աղթամարայ. ՌԾԺԳ—1864։ Երկու կնիքներն էլ դրոշմուած են մանիշակագոյն. երկրորդի մէջ կայ մի հաւասարաթև խաչ այնտեղ, ուր Ամենայն Հայոց Հայրապետների կնիքում գառն Աստուծոյ է։

2 *Ձ. թուականաղարդ. շարունակութիւնը բոլորագիր և նօտրագիր խառն, բուն գրչից։ Բոլորագիր են յատկապէս կաթուղիկոսների անունները։*

3 *Ձ. նախ.* ՀՒՆՈՒԻ՚

4 *Ձ. նախ.* ցՆՈՒԻ՚, *ապա դարձրած* ցՆՈՒԾՈՒԻ՚.

5 *Ձ.* զՍ՚Ը-*ից յետոյ* յաղթամրա *(r տողամիջում) ջնջ. նշ.*